ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԵՐԳՈ ԳԵՎՈՐԳՅԱՆ—*Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII-XIX դդ.), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 380 էջ։*

Աշխատության մեջ ներկայացվում են հայ ժողովրդի պատմական և գրական արժեք ունեցող վիմագիր չափածո ստեղծագործությունները, որոնք ստեղծվել ու հարստացվել են՝ կրելով ժամանակաշրջանների կնիքը։ Տրվում են վիմագիր բանաստեղծության հորինվածքի բնորոշ գծերը և հայ ժողովրդի ըմբռստ ոգու մաքառման արձագանքները։

Վիմագիր ստեղծագործություններում լուսաբանվում են պանդխտության, բարոյախրատական, սոցիալական հարցերը, ցույց են տրվում ժողովրդի հայրենասիրությունը, պայքարն օտար նվաճողների դեմ, հավատալիքները, ավանդույթները, հիշատակվում են ճարտարապետական հուշարձանները։

Գիրքն ունի հավելված, ծանոթագրություններ, գրականության ցանկ, անձնանունների և տեղանունների ցանկեր։

Պատասխանատու խմբագիրն է Գ. Մ. Գրիգորյանը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԵՎՈՍՅԱՆ—*Ռեթեոս Պերպերյան (փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հայացքները), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 290 էջ։*

Գրքի I գլխում ներկայացվում է XIX դ. 70—90-ական թվականների արևմտահայ դեմոկրատական մտքի խոշորագույն ներկայացուցիչ, մանկավարժ, հրապարակախոս, հայկաբան, լեզվագետ Ռեթեոս Պերպերյանի կյանքը և գործունեությունը։ Ապա վերլուծվում են Պերպերյանի սոցիալ-քաղաքական, հասարակագիտական հայացքները (II գլուխ)։ Փիլիսոփայական հայացքներում Պերպերյանը դրսևորում է իդեալիստական մտածելակերպ, որի մասին խոսվում է VII գլխում։ IV գլխում լուսաբանվում են Պերպերյանի՝ բարոյագիտությանը նվիրված հարցերը, որոնց նա անդրադարձել է իր հրապարակախոսական և մանկավարժական բնույթի աշխատանքներում՝ հարելով Կանտի ուսմունքին։

Գիրքն ունի ամփոփում (ռուսերեն), օգտագործված գրականության ցանկ։ Գրքի Հավելվածում հրապարակվում է Պերպերյանի՝ XIX դ. 70—90-ական թվականների հայ իրականության մեջ տեղ գտած փիլիսոփայական ուղղությունների և գաղափարական պայքարի հետ կապված փիլիսոփայական աշխատությունը։

Պատասխանատու խմբագիրն է Կ. Ա. Միրումյանը։

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊՅԱՆ—*Վարդան Արևելցի (կյանքն ու գործունեությունը), գիրք Բ, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 351 էջ։*

XIII դ. հասարակական-քաղաքական գործիչ Վարդան Արևելցու կյանքին ու գործունեությանը նվիրված այս մենագրությունն ունի 11 գլուխ։ I գլխում խոսվում է Արևելցու կրթական դաստիարակության, նրա հիմնած ու ղեկավարած բարձրագույն դպրոց-համալսարանների (Կայենաբերդ, Խորվիրապ) մասին։ Արևելցու հասարակական-մշակութային գործունեության երկրորդ բնագավառը մանկավարժությունն է (II գլուխ)։ XIII դ. հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ իր հաղորդած, մեկնաբանած նյութերի ականատես ու մասնակից Արևելցին միաժամանակ հեղինակ է պատմաաշխարհագրական մի աշխատության՝ «Աշխարհացույց» խորագրով, որի մասին պատմվում է III գլխում։ IV, V, VI գլուխներում ներկայացվում է կանոնագիր-իրավագետ, քերականագետ, մեկնիչ Արևելցու նկարագիրը։ Լուսաբանվում է Արևելցու գերը բարոյախրատական (VII), խմբագրական (VIII), մեկնաբանական (IX) բնույթի աշխատանքներում։ Տրվում են Արևելցու գեղարվեստական երկերի գաղափարական, գեղարվեստական վերլուծությունն ու գնահատությունը (X)։ XI գլխում խոսվում է Վարդան Արևելցու լեզվի՝ մթջին հայերենի կիրառության մասին։

Գիրքն ունի ամփոփում, անձնանունների, տեղանունների և օգտագործված գրականության ցանկեր։

Պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Տեր-Պետրոսյանը։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ, *ժողովածու, ընդհ. խմբ. Էդ. Ջրբաշյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 412 էջ։*

Ժողովածուի «Երկու խոսքին» հետևում է Էդ. Ջրբաշյանի հոդվածը՝ «Գրականության պատմա-գործառական ուսումնասիրության սկզբունքները», որտեղ հեղինակը խոսում է ժամանակակից գրականագիտության նորագույն ճյուղերից մեկի՝ պատմագործառական (պատմաֆունկցիոնալ) մեթոդի մասին, որն օգնում է բացահայտել գրականության հասարակական և գեղարվեստական նշանակությունն իր բոլոր կողմերով։

Գրքում տեղ գտած աշխատանքներով արվում է առաջին փորձը՝ գրականության հետազոտության այդ եղանակը կիրառելու հայ դասական գրականության նկատմամբ։ «Եղիշեի «Վարդանանց պատերազմի» 1500-ամյա կյանքը» աշխատանքում Ջ. Ավետիսյանը ներկայացրել է «Վարդանանց պատերազմի» ստեղծման պատմական նախադրյալներն ու միջնադարյան արձագանքները, Եղիշեն և նոր ժամանակները։ Հ. Մարգունու «Դ. Սունդուկյանի «Գեպոն» սերունդների ընկալմամբ» աշխատանքն ունի յուրահատուկ խնդիր՝ տալ կատակերգության ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական տարընթերցումների ժամանակագրական և ամբողջական պատկերը։ Մ. Թևոսյանի «Դ. Վարուժանի «Հեթանոս երգերը» XX դարի հայ դրական-հասարակական գիտակցության մեջ» և Լ. Ղազարյանի «Բաֆֆու «Կայծերի» ընկալման և գնահատման ուղիները» աշխատանքներում լուսաբանվում են գեղարվեստի հարատևող ուժի տարբեր կողմերը։

Յուրաքանչյուր աշխատանք ունի իր ծանոթագրությունները։